AGBU ARMENIAN VIRTUAL COLLEGE AVC ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
Армянский Колледж
ЗАНЯТИЯ
● индивидуальные
● групповые
● дневные
● вечерние
8 938 157 47 87
пр. Стачки, 25,

Частные уроки армянского языка
тел. 8 904 509 68 76

Օրերի հետ

# 2015 – 2016 թթ. ուսումնական տարին թող լինի հայոց լեզուն արժևորելու, պահպանելու և սովորելու տարի



*Մի հայրենադարձ պատանու*
*Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս,*
*Էլ ինչո՞վ ես հույսք բերդիս.*
*Էլ հայրենիք ինչո՞ւ եկար,*
*Թե պիտ խոսես օտար լեզվով,*
*Խմես հայոց գինին նեկտար*
*Կենաց կանչես օտար լեզվով,*
*Քաղես հայոց վարդերն ու հեզ*
*Աղջիկ կանչես օտար լեզվով:*
*Իրավ, քանի լեզու գիտես,*
*Այնքան մարդ ես, իրավն ասին,*
*Բայց որ քո հայ լեզուն չունես,*
*Էլ ի՞նչ հույս ես քո Մասիսին,*
*Որ թողել ես քո մայրենին*
*Հարամ է քեզ հայոց գինին,*
*Հարամ է քեզ աղջիկն հայոց,*
*Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց:*

**Հովհ. Շիրազ**

Ռոստովի մարզի Դոնի Ռոստով, Տագանրոգ, Շախտի, Նովոչերկասկ քաղաքներում գործող կիրակնօրյա հայկական խմբակներում մեկնարկեց 2015-16 թվականների ուսումնական տարին: Այս առիթով զրուցեցինք Ռոստովի մի քանի դպրոցներում գործող հայկական խմբակների մանկավարժների հետ, որոնք իրենց կարծիքներն ու մտահոգություններն են կիսում մեզ հետ:

## Անահիտ Պողոսյան

### Թիվ 61 դպրոց



*Կուլ չերթանք այս ահեղ լափումին,*
*Թույլ չտանք մեր լեզուն ավերեն,*
*Մենք հայ ենք,*
*Ե՛կ խոսենք հայերեն:*

**Հ. Սահյան**

– Սփյուռքում հայ ինքնության պահպանման համար չափազանց կարևոր է մայրենիի իմացությունը, պահպանումն ու տարածումը: Ռոստովի թիվ 61 դպրոցում արդեն 16 տարի գործում է «Արևիկ» խմբակը: Հայեցի կրթել և դաստիարակել ենք տասնյակ հայ մանուկների: Այսօր էլ, յուրաքանչյուր հայ հնարավորություն ունի գալ և անվճար կրթություն ստանալ մեր խմբակում: Չէ որ մեր ժողովրդի համար մայրենի լեզուն ազգապահպան նշանակություն ունի, ինչպես հավատքը, մշակույթն ու հայ ընտանիքը: Սիրելի ծնողներ, եկեք չարգելենք ու չխոչընդոտենք մեր երեխաներին սովորել, խոսել, մտածել, հաղորդակցվել, երգել հայերեն, չէ որ նրանք հայ են, նրանց մեջ հոսում է դարավոր երկրի դարավոր ազգի արյունը:

## Մարիամ Պողոսյան

### Թիվ 83 դպրոց



– Շուրջ 16 տարի է, ինչ թիվ 83 դպրոցում գործում է հայկական «Արևիկ» խմբակը: Հայերեն գրել, կարդալ, մտածել, երգել եմ սովորեցրել տասնյակ հայ և այլազգի մանուկների: Լեզուն է մեր ազգի գոյության վկայագիրը: Հարկ է, որ հայ ընտանիքում խոսեն միայն հայերեն, այնտեղ իշխի հայեցի դաստիարակություն, հայ երիտասարդը սովորի և կիրառի հայոց լեզուն, լինի արթուն, գիտակից ու հավատարիմ իր ինքնությանը: Բազմաթիվ խմբակներ հաճախելու ցանկում թող լինի նաև հայոց լեզվի խմբակը: Եկեք չմոռանանք, որ մենք, առաջին հերթին, հայ ենք, ապրում ենք Սփյուռքում և մեր ներուժն ուղղորդենք հայոց լեզվի, մշակույթի պահպանմանն ու զորացմանը:

## Սոնա Կարապետյան

### Բանասեր - լրագրող

Վերջերս Հայաստանում էի: Հայրենիքում առիթը բաց չեմ թողնում հանդիպել իմ գրչակից ընկերներին: Քննարկում ենք բազմաթիվ հարցեր – գրականության, արվեստի, լեզվի, ընտանիքի: Ցավով մեկ անգամ ևս համոզվեցի, որ լեզվի պահպանման խնդիր կա ոչ միայն Սփյուռքում, այլև բուն հայրենիքում: Ուզում եմ ամբողջացնել իմ զրույցը ջերմուկցի ճանաչված մտավորական, գրող-բանաստեղծ Ատոմ Ավետիսյանի հետ: Մեր զրույցը հետևյալի մասին էր՝ ունենք միասնական լեզվի խնդիր՝ Հայրենիք-Սփյուռք: Գրաբարին վերադառնալ այլևս չենք կարող, քանի որ լեզուն, ինչպես ամեն ինչ բնության մեջ, զարգացում է ապրում ժամանակի թելադրանքով և բնականոն հունով:

Նախ՝ Հայ առաքելական եկեղեցին պիտի սկսի խոսել մասսաներին հասկանալի լեզվով:

Իսկ ընդհանրապես, միասնական լեզվի խնդրի լուծումը տվել է Վահրամ Փափազյանը՝ իր բազմաթիվ գրքերում, որոնց լեզուն արևելահայերենն է, բայց լայնորեն օգտագործել է նաև արևմտահայերենի հարուստ բառապաշարը: Այս երկու լեզուների հավասար և տեղին կիրառելուց մեր լեզուն կդառնա անչափ ճոխ ու գեղեցիկ, ինչպես Փափազյանի դեպքում: Մի խոսքով Փափազյանը տվել է երկու լեզուների միացման և՛ տեսությունը, և՛ պրակտիկան:

Այնպես որ լեզվաշինությունը օրենսդիրների և իրավաբանների գործը չէ: Գրողները, պատմաբանները, դերասանները, լրագրողները, մանկավարժները՝ ահա բոլոր ժամանակների լեզվաշինարարները:

Ժամանակն է դպրոցներում այս երկու լեզուների համատարած և հետևողական ուսուցումը սկսելու: Սա լեզվի խնդրի մասին բազմաթիվ տեսակետներից մեկն է, որը ցանկացա ներկայացնել մեր ընթերցողի ուշադրությանը:

**Պատրաստեց՝ Արմինե Հովսեփյանը**

ЖИЗНЬ ОБЩИНЫ

# В Крыму прошли торжественные мероприятия по случаю празднования Дней армянской культуры




17–18 октября в Крыму прошли торжественные мероприятия по случаю празднования Дней армянской культуры.

Старт событию был дан с началом фестиваля «Армения Маритима («Морская Армения»), который состоялся на центральной набережной Ялты.

В рамках праздника были организованы ярмарка–выставка произведений мастеров–ремесленников, презентация армянской национальной кухни, а также конкурс детских рисунков и сочинений на тему «Морская Армения».

Завершением первого Дня армянской культуры стал концерт армянских творческих коллективов, в котором принимали участие и наши ростовские творческие коллективы.

На следующий день мероприятия прошли в Симферополе. В Государственном академическом музыкальном театре Республики Крым состоялся гала–концерт, где гвоздем программы, как и в первый день, стали выступления коллективов РРОО «Нахичеванская–на–Дону армянская община» и муниципального ансамбля донских армян «Ани».

Лиана ПЕТРОСЯН



